



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2011թ. թիվ 125-Ա

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ “ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ” ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի թիվ 1854-Ն որոշմամբ հաստատված “Վարձատրվող հասարակական աշխատանքների” կազմակերպման ոլորտների և անցկացման պայմանների” 13 կետի պահանջների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. մարտի 17-ի թիվ 59-Ա որոշմամբ հաստատված ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության և դրանց ներկայացման ժամանակացույցը, հաշվի առնելով Զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 15.04.2011թ. նիստով տրված երաշխավորությունները (արձանագրությունը կցվում է) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի համապատասխան գրությամբ տրված համաձայնությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Հաստատել “Վարձատրվող հասարակական աշխատանքներ” ծրագրի շրջանակներում իրականացվելիք հետևյալ ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ԲՈՉԱՐՅԱՆ

2011թ. ապրիլի 29
ք.Վանաձոր